ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 10 սեպտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Մ. Թոփուզյանի

Քննության առնելով քաղաքացի Կարապետ Հաջիյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Կարապետ Հաջիյանը 2010թ. օգոստոսի 26-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ՝

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող 143-րդ հոդվածը վերաբերում է վճռի պարզաբանմանը, վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղմանը:

   Դիմողի կարծիքով, նշված նորմը սահմանափակում է վերաքննիչ եւ վճռաբեկ դատարանների կողմից կայացված որոշումներին պարզաբանումներ տալու եւ դրանցում տեղ գտած վրիպակներն ուղղելու հնարավորությունը, որի արդյունքում, ըստ դիմողի, խախտվում են քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու ազատությունները:

2. Դիմումին կցված դատական ակտերի եւ դիմողի փաստարկների համալիր վերլուծությունը վկայում է, որ տվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են: Այսինքն՝ վերոնշյալ դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարցը:

   Տվյալ եզրահանգումը հիմնավորվում է այն փաստով, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ թույլ տված վրիպակներն ուղղելու մասին 23.07.2010թ. թիվ ՎԴ/3986/05/09 որոշման մեջ վճռաբեկ դատարանը ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածով, ինչը վկայում է այն մասին, որ դատական պրակտիկայում վերոհիշյալ հոդվածում նշված «վճիռ» բառը չի ենթադրում միայն վճիռը, այլ նաեւ ենթադրում է դատական ակտն ընդհանրապես: Այս հանգամանքը վկայում է, որ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտումը վերաբերում է ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականությանը, այլ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ դիմումը վերադարձնելու մասին՝ 23.07.2010թ. թիվ ՎԴ/3986/05/09 որոշման իրավաչափությանը:

3. ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետեւաբար, առկա է դիմումի քննության

ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Կարապետ Հաջիյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

10 սեպտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-29